ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատություն՝ Երևանի թիվ 109 մանկապարտեզ (ՀՈԱԿ)

Դաստիարակ՝ Նունե Մուրադյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն……3
Գլուխ 1. Ծեսեր, տոներ……..4
Գլուխ 2. Սուրբ Զատիկը մանկապարտեզում……7
Եզրակացություններ……18
Գրականության ցանկ……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային ծեսերը: Ծեսը ավանդական կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, մարդկային հարաբերություններում և այլուր: Համամարդկային արժեքների յուրացմանը մեծապես նպաստում է դաստիարակության գործընթացը: Դաստիարակության միջոցով իրականացվող արժեքային համակարգի յուրացման գործընթացն ընթանում է երեխայի ինքնագիտակցության զարգացման և նրա անձնավորության ձևավորման հետ զուգահեռ: Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է:

Մանկապարտեզում ամենասիրված տոներից մեկը Սուրբ Զատիկն է: Աշխատանքի երկրորդ գլխում ներկայացրել ենք թե ինչպես ենք մենք նշել Սուրբ Զատիկը: Աշխատանքի նպատակն է ներկայացնել այն մեթոդական հնարները, տեխնոլոգիան, որի արդյունքում երեխաները ոչ միայն գաղափար են կազմում տոնի, ծեսի մասին, այլև դառնում են դրա մի մասնիկը, դրա կրողը, հետագայում արդեն փոխանցողը:

Երեխաները ծեսի նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը: Կենդանի, ազատ միջավայրում, առանց սցենարով գրված, անգիր արած տեքստի, խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեքստով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:

Գլուխ 1. Ծեսեր, տոներ

Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունն ու հարատևությունը:

Ծես նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, պետությանը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և դարեդար են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել էթնոսին բնորոշ առանձնահատկությունները[1]: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ էթնոսի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին: Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթների, ծեսերի, տոների տեսքով նաև: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու կարևորագույն գործառույթով: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Դաստիարակությունն ավագ սերունդների կողմից աճող

[1] Մկրտչյան Մ., Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում, էջ 1
https://marinemkrtchyan.files.wordpress.com/2016/04/d5aed5a5d5bdd5a5d680d5ab-d5aed5abd5bdd5a1d5afd5a1d5b6-d5a3d5b8d680d5aed5b8d5b2d5b8d682d5a9d5b5d5b8d682d5b6d5b6d5a5d680d5ab-d5abd680.pdf

սերունդներին հասարակական-պատմական փորձի փոխանցման, մշակութային երկխոսության, հոգևոր-բարոյական արժեքների յուրացման գործընթացն է՝ նրանց ակտիվ կենսագործունեության և աշխատանքի նախապատրաստելու նպատակով, որն անհրաժեշտ է հասարակության հետագա զարգացումն ապահովելու համար:

Դաստիարակության սկզբունքների թվում պետք է դասել նաև դաստիարակության հասարակական ուղղվածության, երեխայի կյանքի, անհատական փորձի և գործունեության հետ դաստիարակության կապի, դաստիարակության մարդասիրական բնույթի առաջնայնության, մանկավարժական ներգործությունների միասնության և փոխհամաձայնեցման, դաստիարակչական ներգործության մեջ հետևողականության, կրթական հաստատության, ընտանիքի, հասարակության պահանջների միասնության և փոխհամաձայնեցման սկզբունքները[2]: Արժեքային համակարգի յուրացման ընթացքը հիմնավորում և առավել կարևորում է հասարակական դաստիարակության և մանկավարժական ներգործության անհրաժեշտությունը, դրանց դերն ու նշանակությունը երեխայի անձնավորության զարգացման գործում: Համամարդկային արժեքների յուրացմանը մեծապես նպաստում է դաստիարակության գործընթացը: Դաստիարակության միջոցով իրականացվող արժեքային համակարգի յուրացման գործընթացն ընթանում է երեխայի ինքնագիտակցության զարգացման և նրա անձնավորության ձևավորման հետ զուգահեռ: Դաստիարակության սոցիալական նշանակությունն ակամայից պարտադրում է հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթացի անհրաժեշտություն: Լայն մանկավարժական առումով դաստիարակությունն իրենից ներկայացնում է կառավարելի մանկավարժական գործընթաց՝ ուղղված երեխայի անձնավորության ձևավորմանը: Երեխայի առանձին անձնային հատկությունների ձևավորման դեպքում դաստիարակությունն օգտագործվում է նեղ մանկավարժական նշանակությամբ: Դաստիարակության նպատակային մանկավարժական ներգործության շնորհիվ ձևավորվում է որոշակի անձնային հատկություններով

[2] Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան 2005, էջ 270:

օժտված հասարակության անդամ, աճող սերնդի ներկայացուցիչ[3]:

Ազգային դաստիարակության՝ բազմամշակութային դաստիարակությանը զուգորդման սկզբունքի համաձայն՝ անձի զարգացման և դաստիարակության գործում պետք է հիմնվել ազգային դաստիարակության համակարգի, ազգային ինքնագիտակցության ձևավորման, մշակութային ինքնության, ազգային դիմագծի, հոգեկերտվածքի, մենթալիտետի, ոգու, նկարագրի, ազգային հիշողության պահպանման գաղափարական հիմնադրույթների վրա:

Նախադպրոցական մանկությունը մի ժամանակաշրջան է, որի ընթացքում երեխան մեծահասակների ակտիվ մասնակցությամբ ձեռք է բերում այնպիսի անձնային հատկություններ և հմտություններ, որոնք կանխորոշում են նրա ապագա կյանքն ու գործունեությունը: Երեխայի անձնավորության զարգացմանը առավելագույնս նպաստում է դաստիարակության գործընթացը: Դաստիարակության շնորհիվ են յուրացվում բարոյական արժեքներ, ձեռքբերվում սոցիալական կարողություններ և հմտություններ, ձևավորվում է որոշակի վերաբերմունք աշխարհի հանդեպ: Դաստիարակությունն օգնում է երեխային ներդաշնակ հարաբերվելու բնության և հասարակության հետ, սովորեցնում է հաղորդակցվել և համագործակցել, նպաստում ինքնահաստմանն ու ինքնահիրացմանը: Նախադպրոցական մանկության շրջանում երեխայի զարգացումը պայմանավորված է առաջին հերթին դաստիարակության գործընթացով: Դաստիարակությունն է նախադպրոցական մանկավարժության առաջատար գործառույթը, որի կազմակերպման արդյունավետությունից է մեծապես կախված նախադպրացականի լիարժեք զարգացման ընթացքը: Այսօր նախադպրոցականի զարգացման աստիճանը գնահատվում է ոչ այնքան նրա գիտելիքների պաշարով, որքան դրանք համապատասխան իրադրություններում կիրառելու, աշխարհընկալման գործընթացում ինքնուրույն կողմնորոշվելու, ազատ մտածելու և կարծիք հայտնելու կարողություններով: Համակարգված գիտելիքների փոխանցումը, գիտելիքների

[3] Ասատրյան Լ., Ասատրյան Մ., Մանկավարժություն 2013, էջ 231:

համակարգի ձևավորումը ինքնանպատակ չէ, այն կոչված է նպաստելու նախադպրոցականի իմացական ակտիվությանը և աշխարհճանաչման ինքնուրույնությանը։

Գլուխ 2. Սուրբ Զատիկը մանկապարտեզում

Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է։ Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը։ Մանկապարտեզում ամենասիրված տոներից մեկը Սուրբ Զատիկն է։ Հայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենամեծ ու ամենասպասված տոնն է, որը եկեղեցական օրացույցով (325թ. Նիկիայի տիեզերաժողովի որոշմամբ) կատարվում է գարնան գիշերահավասարից և լուսնի լրումից հետո եկող առաջին կիրակին։ Այն շարժվում է 35 օրերի միջև՝ մարտի 22 -ից մինչև ապրիլի 25 -ը[4]։

Տոնի նախապատրաստական աշխատանքները մանկապարտեզում սկսում ենք շատ ավելի վաղ։ Սկսում ենք ցորենացանը, սաները բերում են բամբակ և ցորեն, ափսե ու ջուր, դուրս գալիս բակ։ Սկզբից բամբակն ենք հարթ փակցնում տարայի վրա, հետո մի քիչ ջուր ենք ցողում, որ խոնավանա բամբակը, ապա լցնում ենք ցորենը, կարելի է նաև ոսպ ցանել։ Ցանում ենք ցորենը՝ անհամբեր սպասելով ածիկի աճելուն։ Նախ մի քանի օր առաջ երեխաներին պատմում ենք, որ շուտով տոն է, ինչին է այն նվիրված, ինչ ծիսական երգեր կան տոնին նվիրված, սովորում ենք այդ երգերը, երեխաները պատմում են, թե ինչ գիտեն այդ տոնի մասին, այն ինչպես են նշում։ Երեխաներին հանձնարարում ենք սովորել հանելուկներ տոնին նվիրված։ Ապա որոշում ենք, թե ինչպես ենք երեխաներին ծիսակատարությանը պատրաստելու։ Ընդհանրական առումով երեխաները այս ընթացքում սովորում են ծիսական և ծեսին համապատասխան

[4] Մկրտչյան Մ., Հայ ազգային տոներն ու ծեսերը, էջ 25
https://marinemkrtchyan.files.wordpress.com/2016/04/d5a1d5a6d5a3d5a1d5b5d5abd5b6-d5aed5a5d5bdd5a5d680-d5bfd5b8d5b6d5a5d680.pdf

երգեր,

ասույթներ,

օրհնանքներ,

սովորում են

ավանդական պարեր,

պատրաստում են ծիսական պարագաներ,

խաղարկում են ծիսական գործողություններ,

ծիսական խաղեր,

բեմականացնում են երգեր:

Արդյունքում երեխաները, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը: Այս ամենի ընթացքում տեղի է ունենում նյութի յուրացում, գիտելիքների, կարողությունների, դրսևորում և կիրառում գեղարվեստական խոսքի մշակում, տարբեր կարողությունների դրսևորում, հղկում, մի շարք հմտությունների ձեռքբերում, մշակում (լեզվական, թատերական), գրական - գեղարվեստական ճաշակի զարգացում, ինքնադրսևորում, ձերբազատում բարդույթներից:

Այս աշխատանքները նպաստում են.

երեխայի բառապաշարի հարստացմանը,

մտածողության ձևավորմանը,

ստեղծագործական երևակայության զարգացմանը,

ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը,

բավարարվում է նրա ինքնահաստատման – ինքնադրսևորման պահանջը,

ձեռք է բերվում

խմբով աշխատելու,

ինքնակազմակերպման հմտություններ,

զարգանում է գեղարվեստական ճաշակը (նկարչություն, ձեռարվեստ, երաժշտություն

և այլն), հնարավորություն են տալիս գնահատելու և յուրացնելու ազգային արժեքները:

Երեխան կիմանա

ազգային ծեսերը,

ազգային սովորույթները,

ազգային ավանդական պարերը,

հայկական ժողովրդական և ծիսական երգերը,

ծիսական կերպարները,

ժողովրդական, մանկական, ծիսական խաղերը,

ծիսական կերակրատեսակները,

ծիսական պարագաները:

Երեխան կկարողանա պարել ազգային ավանդական պարեր, երգել հայկական ժողովրդական և ծիսական երգեր, պատրաստել ծիսական պարագաներ, խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները ծեսի նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը: Կենդանի, ազատ միջավայրում, առանց սցենարով գրված, անգիր արած տեքստի, խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեքստով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Ծիսական միջավայրում կատարում են ուսուցանված երգերը, պարերը, մասնակիցներն ազատ են իրենց ստեղծականության մեջ, միևնույն ժամանակ նախօրոք անպայման պատրաստվում են՝ ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են, որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել:

Համաձայն նախադպրոցական դաստիարակության հայեցակարգի, խաղն իրենից ներկայացնում է ինքնարժեք գործունեություն, որը նախադպրոցահասակ երեխային շնորհում է ներքին ազատության և ինքնուրույնության զգացողություն, ցանկալին իրողություն դարձնելու վստահություն, հաճույք և բավարարվածություն զգալու լայն հնարավորություններ: Խաղային գործունեության ընթացքում երեխայի համար ստեղծվում են լավագույն պայմաններ (ազատ և բնական միջավայր, հուզական ներդաշնակություն, հավասարության մթնոլորտ)՝ հասակակիցների միջավայրում «այստեղ և անհապաղ» ինքնահաստատվելու համար: «Այստեղ և անհապաղ» ինքնահաստատվելու հնարավորությունը երեխայի խաղային գործունեության հիմնական դրդապատճառն է, հետևաբար ներեխաների խաղային գործունեության կազմակերպման կառուցման գլխավոր սկզբունքը: Յուրաքանչյուր խաղացող երեխա

առաջին հերթին ջանում է ինքնահաստատվել հասակակիցների միջավայրում, և խաղի առավելությունը, մանկան գործունեության այլ ձևերի համեմատությամբ այն է, որ խաղում կան ինքնահաստատվելու բոլոր հնարավորությունները: Խաղն, իսկապես, ինքնարժեք գործունեություն է և բացարձակ անփոխարինելի է նախադպրոցականի կյանքում: Որևէ այլ գործունեություն չունի խաղային գործունեության նշված առավելությունները: Այսպիսով, խաղային գործունեությունը նախադպրոցականի անձնավորության կայացման ներքին գործոն է, որը չի կարող ամբողջապես բացատրվել և ընդհանրացվել, այն բավական սուբյեկտիվ է: Խաղն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացմանը, օրինաչափորեն նպաստում է նրանց հոգեկանի զարգացմանը, հուզազգացմունքային ոլորտի հարստացմանը, հասակակիցների հետ փոխհարաբերությունների հաստատմանը, սեփական սոցիալական փորձի ձեռքբերմանը: Խաղը նախադպրոցականի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց է և նրա հետագա զարգայման հիմնական գրավականը[5]:

Խաղային գործունեության հիմնական առանձնահատկություններն են

Խաղային գործունեության ընթացքում բավարարվում են նախադպրոցականի հիմնական պահանջմունքները՝ ակտիվության և ինքնուրույնության, հաղորդակցման և մեծահասակների կյանքին անմիջականորեն հաղորդակից լինելու, արտաքին աշխարհը ճանաչելու և այն արտացոլելու:

Խաղային գործունեության ընթացքում բնականոն ճանապարհով զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները, ձևավորվում են նորագոյացություններ, որոնք նախապատրաստում և ապահովում են երեխայի հոգեկանի զարգացման հաջորդ փուլը:

[5] Մարության Ս.Ա. ,Դալլաքյան Ա.Մ. , Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008, էջ 95:

Խաղային գործունեությունը նպաստում է գործունեության նոր ձևերի՝ աշխատանքի և ուսումնական գործունեության, առանձնացմանը: Երեխայի խաղն իր զարգացման ընթացքում ձեռք է բերում աշխատանքային և ուսումնական գործունեությանը բնորոշ կառուցվածքային տարրեր՝ նպատակ, պլանավորում, արդյունք, որոնք, ձևավորվելով խաղային գործունեության ընթացքում, տեղափոխվում են գործունեության այլ ձևեր[6]:

Խաղային գործունեությունը բնական գործունեություն է, ուր չկա ճնշում և հարկադրանք, առկա է երեխաների համար բնական միջավայր: Խաղի ընթացքում երեխաներն ազատ են և ինքնուրույն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ:

Խաղը ստեղծագործական գործունեություն է, քանի որ այն նպաստում է յուրաքանչյուր խաղացող երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը և կրեատիվ (ստեղծագործական) ընդունակությունների զարգացմանը: Խաղը նաև երեխայի ընդունակությունների և կարողությունների ախտորոշման արդյունավետ միջոց է:

Խաղը աշխարճանաչման և աշխարհի արտացոլման եղանակ է, իմացական գործունեություն: Խաղային գործունեության ընթացքում ձեռքբերած գիտելիքները կրկնակի արժեքավոր են՝ դրանք և տեղեկատվական են և գործնական բնույթի: Գիտելիքի՝ խաղում անմիջապես կիրառվելու կամ փորձարկելու հնարավորությունը, նպաստում է դրա յուրացմանը և ամրապնդմանը, խաղի ընթացքում ձեռքբերած գիտելիքները չափազանց կայուն են[7]:

Խաղային գործունեությունն իր բնույթով ուղղված է նախադպրոցականի հուզակամային ոլորտի զարգացմանը, հետևաբար և հիմնարար անձնային որակների

[6] Մարության Ս.Ա. ,Դալլաքյան Ա.Մ. , Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008, էջ 95:
[7] Մարության Ս.Ա. ,Դալլաքյան Ա.Մ. , Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008, էջ 96:

ձևավորմանը:

Զվախաղեր

Զատկի տոնին բնորոշ են ձվախաղերը: Այդ օրվան հատկապես սպասում են երեխաները:

Զուկոտրոցի

Զուկոտրոցին խաղում են երկուսով: Մրցակիցներից յուրաքանչյուրը խաշած, բայց չկոտրված ձու պետք է ունենա:Խաղի նպատակն է՝ պարզել, թե ում ձուն է ավելի ամուր: Խաղացողներից մեկը ձուն պետք է բռնի ափի մեջ՝ բութ մատի և ցուցամատի օղակմամբ, չծածկելով ձվի քիթը, իցկ մյուսը պետք է աշխատի իր ձվի քթով հարվածել խաղընկերոջ ափի մեջ բռնած ձվի քթին այնպես, որ դիմացինի ձուն կոտրվի[8]:

Խաղի կանոնները.

Զու կռվեցնողները բանավոր կամ վիճակ գցելով պարզում են, թե ով է ձուն բռնողը կամ հարվածողը: Հարվածող կողմը պարտավոր է հարվածը ձվի ճիշտ ծայրամասին ուղղել: Նախ կռվեցնում են ձվերի սուր քթերը և դրանից հետո միայն, երբ այդպիսի պայմանավորվածություն է եղել, կռվեցնում են բութ քիթը բութի կամ հաղթող ձվի սուր քիթը՝ պարտված ձվի սուր քթի հետ: Հաղթողը տիրանում է ջարդված ձվին: Որպես կանոն, այս ձվախաղին նախորդում է ձու կռվեցնողների՝ իրենց ձվի գովաբանությունը: Մինչ բուն կռվին անցնելը կռվեցնողները նախ ստուգում են՝

[8] Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոները, Երևան 2005, էջ 135:

արդյո՞ք կեղծ չի հակառակորդի ձուն[9]:

Զուդլդորիկ

Այս խաղը սովորաբար խաղում են ծայրերն արդեն կոտրված, շահած ձվերով: Օրվա երկրորդ կեսին են խաղում, քանի որ օրվա այդ ժամին արդեն չջարդված ձվեր համարյա թե չեն մնում: Խաղում են թեք տեղանքում: Խաղի նպատակն է՝ ձուն բլրակի գագաթից գլորելով դիպցնել մինչ այդ մրցակիցների գլորած ձվերից որևէ մեկին և այդպիսով ձու շահել:

Խաղի կանոնները.

1. Առաջին ձուն գլորողից հետո հաջորդ ձուն գլորողները փորձում են իրենց ձուն այնպես գլորել, որ այն դիպչի մինչ այդ գլորած և բլրի թեք լանջերում կամ ստորոտում անշարժ դիրքում գտնվող որևէ ձվի:

2. Այն խաղացողին, ում հաջողվել է գլորելով խփել ներքևում գտնվող ձվին, իրավունք է վերապահվում վերցնել խփված ձուն և մեկ անգամ ևս գլորել:

3. Խփված ձվի տերը համարվում է պարտված և խաղից դուրս է մնում կամ էլ խաղի մեջ է մտնում նոր ձվով:

4. Ըստ հերթի՝ մինչև վերջ ձվերը գլորելուց հետո առաջին ձուն գլորող մասնակիցը և ըստ հերթի՝ մյուսները (եթե ձուն չեն տարվել) իրավունք ունեն վերցնել իրենց արդեն գլորած ձուն և նորից գլորել:

5. Խաղավարտին, երբ խաղացողների թիվն արդեն խիստ կրճատված է լինում, իսկ ձվերի դիպչելու հավանականությունը՝ պակասած, մասնակիցները կարող են կնքել հետևյալ պայմանը՝ բոլոր ձվերը կվերցնի նա, ով ձուն գլորելիս անշարժ ձվերից ցանկացածին կդիպցնի[10]:

---

[9] Հարոյան Ռ., Զատիկ, Երևան 1996, էջ 80:

[10] Հարոյան Ռ., Զատիկ, Երևան 1996, էջ 81:

6. Արգելվում է գլորվող ձվին այս կամ այն եղանակով բնական ընթացքից շեղելը: Այս խաղը առավել հետաքրքիր է դառնում, երբ մասնակիցները շատ են լինում: Խաղի ընթացքում, որպեսզի թյուրիմացություններ չառաջանան, թե ձվերից որը ում է պատկանում, խաղացողը գլորելուց հետո գնում է դրա հետևից և կողքին կանգնում, պայմանով, որ այն չտեղաշարժի և գլորվող ձվերին չխանգարի: Խաղի համար երեխաները կարող են նաև դատավոր ընտրել:

«Զուգլդորիկը» հաճախ միայն 5-րդ կանոնի համաձայն են խաղում: Այս դեպքում

ա) որպեսզի խաղացողի կողմից նախապես ուղղություն տալու հնարավորությունը բացառվի, խաղը կազմակերպում են այն պատերի տակ, որտեղ հողը թեքություն ունի: Պատի վրա նախապես մինչև մեկ մետր բարձրության վրա որևէ կետ են նշում, և բոլորը պարտավորվում են այստեղից ձուն պահելով բաց թողնել թեք հարթության վրա.

բ) մրցակիցներից յուրաքանչյուրը նոր ձվով է հանդես գալիս՝ նախօրոք նետած ձուն (ձվերը) գետնին թողնելով: Սա հնարավորություն է ընձեռում, որ գետնին հնարավորին չափ շատ ձվեր կուտակվեն և հաղթողը բոլորին տիրանա.

գ) ձու գլորողը կարող է իր քայլքով մեկ ձու շահել, եթե նրա նետած ձուն որևէ ձվից իր թզի հեռավորության վրա կանգնի: Այս դեպքում վերջինս նրա ավարն է դառնում, բայց սեփական ձուն գետնին է մնում, իսկ քայլ կատարելու հերթը հաջորդ մրցակցին է անցնում.

դ) պահեստային ձու չունենալու դեպքում տվյալ մասնակիցը խաղից դուրս է մնում՝ նախորդ նետած ձվերը կորցնելով:

Զվարշավ

Այս խաղը նույնպես սովորաբար կոտրված ձվերով են խաղում: Խաղացողները՝ 2 – 4 հոգի, թեք տարածք են ընտրում և բարձունքից միաժամանակ իրենց ձվերը գլորում: Ում ձուն որ հեռու գլորվի, նա էլ հաղթող է ճանաչվում և մյուսների ձվերը «հավաքում»: Զվերը միաժամանակ և նույն տեղից գլորելու նպատակով խաղացողներից մեկը ձեռքի ձգված ափը ուղղահայաց գետնին է հպում, ապա բոլոր մասնակիցները իրենց ձվերը կողք-կողքի, այս ափ-պատնեշի ետևում են շարում:

Ձեռքը հեռացնելուն պես ձվերը բարձունքից ցած են գլորվում՝ ձվարշավի տպավորություն թողնելով[11]:

Ձուպտտոցի

Խաղի ժամանակ մեկին դատավոր են ընտրում, որի հրահանգ տալուն պես որևէ հարթ մակերեսին փորձում են սուր քթի վրա միաժամանակ պտտեցնել ձվերը: Ում ձուն ավելի երկար պտտվի, նա էլ հաղթող է ճանաչվում և մյուս բոլոր խաղացողների ձվերը շահում: Երբեմն հաղթողին այլ կերպ են որոշում՝ ելնելով ոչթե ձվի՝ քթի վրա երկար ժամանակ պտտվելուց, այլ վերջինիս անշարժանալով[12]:

[11] Հարոյան Ռ., Ձատիկ, Երևան 1996, էջ 81:
[12] Հարոյան Ռ., Ձատիկ, Երևան 1996, էջ 83:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դաստիարակությունն է նախադպրոցական մանկավարժության առաջատար գործառույթը, որի կազմակերպման արդյունավետությունից է մեծապես կախված նախադպրոցականի լիարժեք զարգացման ընթացքը: Այսօր նախադպրոցականի զարգացման աստիճանը գնահատվում է ոչ այնքան նրա գիտելիքների պաշարով, որքան դրանք համապատասխան իրադրություններում կիրառելու, աշխարհընկալման գործընթացում ինքնուրույն կողմնորոշվելու, ազատ մտածելու և կարծիք հայտնելու կարողություններով: Համակարգված գիտելիքների փոխանցումը, գիտելիքների համակարգի ձևավորումը ինքնանպատակ չէ, այն կոչված է նպաստելու նախադպրոցականի իմացական ակտիվությանը և աշխարհաճանաչման ինքնուրույնությանը:

Խաղը աշխարհաճանաչման և աշխարհի արտացոլման եղանակ է, իմացական գործունեություն: Խաղային գործունեության ընթացքում ձեռքբերած գիտելիքները կրկնակի արժեքավոր են՝ դրանք և՛ տեղեկատվական են, և՛ գործնական բնույթի: Գիտելիքի՝ խաղում անմիջապես կիրառվելու կամ փորձարկելու հնարավորությունը, նպաստում է դրա յուրացմանը և ամրապնդմանը, խաղի ընթացքում ձեռքբերած գիտելիքները չափազանց կայուն են:

Արդյունքում երեխաները, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան 2005:

2. Ասատրյան Լ., Ասատրյան Մ., Մանկավարժություն 2013:

3. Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոները, Երևան 2005:

4. Հարոյան Ռ., Զատիկ, Երևան 1996:

5. Մարության Ս.Ա. ,Դալլաքյան Ա.Մ. , Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008:

6. Մկրտչյան Մ., Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում, https://marinemkrtchyan.files.wordpress.com/2016/04/d5aed5a5d5bdd5a5d680d5ab-d5aed5abd5bdd5a1d5afd5a1d5b6-d5a3d5b8d680d5aed5b8d5b2d5b8d682d5a9d5b5d5b8d682d5b6d5b6d5a5d680d5ab-d5abd680.pdf

7. Մկրտչյան Մ., Հայ ազգային տոներն ու ծեսերը, https://marinemkrtchyan.files.wordpress.com/2016/04/d5a1d5a6d5a3d5a1d5b5d5abd5b6-d5aed5a5d5bdd5a5d680-d5bfd5b8d5b6d5a5d680.pdf